

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 2004 թ. սեպտեմբերի 2-ի նիստի

- Ա.Մարգարյան - ՀՀ վարչապետ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ
- Մ.Թովուզյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Կ. Կիրակոսյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Ա.Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
- Մ.Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի վարչության պետ
- Մ.Լալայան - «Հանրապետական» կուսակցության խորհրդի անդամ
- Գ.Հարությունյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն
- Մ.Մկրտչյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրենի տեղակալ
- Ս.Սեյրանյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տնօրենի տեղակալ
- Թ.Վարդանյան - «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի ծրագրի ղեկավար

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2004թ. առաջին կիսամյակի գործունեության հաշվետվության, 2005թ. բյուջեի, ԳԿՀ-ում կառուցվածքային և հաստիքային փոփոխությունների, «Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրենի աշխատանքային պայմանագրի մասին

(Ս.Սեյրանյան, Մ.Մկրտչյան, Գ.Հարությունյան, Մ.Լալայան, Ա.Ավետիսյան, Կ. Կիրակոսյան, Մ.Թովուզյան, Ա.Մարգարյան)

Որոշեցին.

1. Հաստատել

- 1.1 «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի 2004թ. 1-ին կիսամյակի հաշվետվությունը՝ ներառյալ «Նորավանք» ԳԿՀ-ի աշխատանքային դրույթները և կառուցվածքը:
- 1.2 «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի ՀՀ պետական բյուջեի 2005թ. հայտը՝ 78,7մլն. դրամ չափով:

- 2.Թույլատրել «Նորավանք» ԳԿՀ-ի հիմնադրամին՝ իր կողմից հրատարակված «21-րդ դար Նորավանք գիտակրթական հիմնադրամի» հանդեսը, «ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ» և «ՀԱՅԱՍՏԱՆ» տեղեկագրերը անվճար տրամադրել պետական և ոչ պետական կազմակերպություններին և ֆիզիկական անձանց:
- 3.Թույլատրել «Նորավանք» ԳԿՀ-ի հիմնադրամին՝ կանոնադրական նպատակներով իրականացվող ծախսերի հաշվին, պայմանագրային հիմունքներով աշխատանքի ընդունել հաշվապահական, տեխնիկական և սպասարկող անձնակազմերի:

- 4.«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրենի աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2006թ. օգոստոսի 6-ը:

- 5.Շարունակել Համահայկական համալսարանի հայեցակարգի մշակման աշխատանքները՝ առանց հրապարակային քննարկումների:

- 6.ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար պրն Մ.Թոփուզյանին ներկայացնել առաջարկություն՝
 - ա) «Նորավանք» ԳԿՀ-ին համապատասխան պետական ծրագրերի ներգրավելու վերաբերյալ
 - բ) «Նորավանք» ԳԿՀ-ի փորձագետներին պետության կողմից անցկացվող համաժողովներին և այլ համապատասխան միջոցառումների հրավիրելու վերաբերյալ:

7. «Նորավանք» ԳԿՀ-ի և գործադիր տնօրենի Գ. Հարությունյանին՝ մեկամսյա ժամկետում առաջարկություն ներկայացնել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Ամադու գյուղի տարածք այցելելու նպատակով միջոցառում կազմակերպելու վերաբերյալ:

«Նորավանք» գիտակրթական
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ
ՀՀ վարչապետ՝

Ա. Մարգարյան